Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 853 - Ա
որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԿԱՀՈՒՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության համայնքներին կահույքի տրամադրում սոցիալական աջակցության նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպություն, 6850 Քենդի պողոտա, սենյակ 102, Ռեսեդա, Կալիֆորնիա 91355, Լոս Անջելես
4.	Ծրագրի կատարողը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, քաղ. Երևան,Վիկտոր Համբարձումյան փողոց 2 շենք, 37 բնակարան, ՀՎՀՀ՝ 00130776
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ, Արաքս համայնքի Գայ և Արաքս, Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս, Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան բնակավայրեր, Շիրակի մարզի Գյումրի համայնք, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր և Վայք համայնքի Ջառիթափ բնակավայրեր՝ բնագավառը սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	10,134,580 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ բնակավայրի նախակրթարան, Արաքս համայնքի Գայ և Արաքս բնակավայրերի մանկապարտեզներ, Արարատի մարզի Մասիս քաղաքի թիվ 3 մանկապարտեզ, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 4 մանկապարտեզ, Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ» զարգացման կենտրոն մանկապարտեզ, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի թիվ 3 և Վայք համայնքի Ջառիթափ բնակավայրի մանկապարտեզներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի դեկտեմբերի 5-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Կահույքի պատվիրում և մատակարարում՝ 10,134,580 դրամի չափով նախատեսվում է իրականացնել 2024 թվականի դեկտեմբերի 5-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) մանկական մահճակալ-176 հատ-6,042,700 դրամ 2) ներքնակ-177 հատ-867,300 դրամ 3) խաղային կենտրոն-14 հատ-373,800 դրամ 4) պահարան-56 հատ-809,280 դրամ 5) ճաշասեղան–29 հատ-400,200 դրամ 6) մանկական աթոռակ-198 հատ-1,178, 100 դրամ 7) նստարան-6 հատ-61,200 դրամ 8) աշխատասեղան-4 հատ-158,000 դրամ 9) աթոռ–6 հատ –132,000 դրամ 10) գրատախտակ – 2 հատ- 37,000 դրամ 11) բեռնափոխադրումը՝ 75,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման , տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

03.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ